11
ՀՈՒՆՎԱՐԻ
2023

Luys Լույս®

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ. ԿՅԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ. ԿՅԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Ենթադրենք՝ մենք ողջ մնացինք, բայց կապրե՞նք:
Էրիխ Մարիա Ռեմարկ,
«Արևմտյան ճակատում նորություն չկա», 1929թ.

1957 թվականին քաղաքացիական ընդվզումները պարուրել էին Վիետնամը: Արդյունքում դրանք վերածվեցին երրորդ պետությունների ռազմական միջամտությամբ մեծամասշտաբ պատերազմի: «Սառը պատերազմից» ի վեր՝ ավելի քան 20 տարի, Վիետնամն ամենաարյունալի ռազմական կոնֆլիկտի էպիկենտրոնն էր. շարունակական պատերազմական գործողությունների հետևանքներն իրենց վրա զգացին նաև հարևան երկրները՝ Կամբոջան և Լաոսը:

Ֆրանսիական գաղութային բանակը պարտվեց Վիետնամի կոմունիստական ուժերին և կորցրեց վերահսկողությունը տարածաշրջանի վրա: Հարավարևմտյան Ասիայում գերիշխող դիրքը չկորցնելու համար ԱՄՆ-ը ներքաշվեց Վիետնամի հետ պատերազմի մեջ:

Ամերիկացիները զանգվածաբար ռմբակոծում էին վիետնամական տարածքները տակտիկական ու ծովային ավիացիայի օգնությամբ: Նշմարելի հաջողությունների չհասնելով՝ ԱՄՆ-ը գործի դրեց ստրատեգիական կործանիչները, իսկ արդեն 1965 թվականին մարտական գործողությունների մեջ սկսեցին կիրառվել ամերիկյան ցամաքային զորքերը: Սկզբնական շրջանում նրանք փորձեցին իրենց վերահսկողության տակ առնել սահմանային օբյեկտները, իսկ հետո պարբերաբար բացահայտում ու ոչնչացնում էին պարտիզանական կազմավորումների բազաները:

Միջազգային հանրությունը խիստ դատապարտում էր ամերիկյան բանակի գործողությունները: Եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում պարբերաբար տեղի էին ունենում Վիետնամում ընթացող պատերազմի դեմ բողոքի ցույցեր:

Հակապատերազմական հանրահավաքներում փորձ էր կատարվում միջազգային հանրությանը լսելի դարձնել վիետնամցի ժողովրդի դեմ տարվող կոշտ պայքարի ողջ անհեթեթությունը:

Չնայած ԱՄՆ-ի գործողություններին՝ այդ երկրին չհաջողվեց կոտրել վիետնամցի ժողովրդի կամքը: Ամերիկացիների համար հոգեբանական ցնցում էր այն գիտակցումը, որ զարգացած պետությունը, որը, ունենալով ժամանակակից ռազմական զինատեսակներ և անխնա ոչնչացնելով Վիետնամի տարածքի վրա գտնվող յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ, այդպես էլ չկարողացավ հաղթանակ տանել: Ամերիկան պարտվեց պատերազմը մի պետության, որն անգամ ի զորու չէր եղել այդ պահին կառուցել արդյունաբերական հասարակություն:

Վիետնամում ռազմական գործողությունները ԱՄՆ-ի իշխանությունները ընկալում էին որպես փոքր պատերազմ, որը, ըստ իրենց կանխատեսումների, պետք է նաև շուտ ավարտվեր: Զորակոչն իրականացվել էր 1 տարվա համար, որին մասնակցել էին հիմնականում երիտասարդ՝ 19 տարեկան տղաներ: Ռազմական մասնագիտական պատրաստվածությունն իրականացվում էր հենց մարտի պայմաններում, սակայն զինվորները փորձում էին խուսանավել վտանգավոր գործողություններից՝ հաշվելով օրերը, թե երբ են տուն վերադառնալու:

Ամերիկացիները պատրաստ չէին պատերազմել ջունգլիների պայմաններում, որին տեղի բնակիչները ծանոթ էին իրենց հինգ մատի պես: Չնայած վիետնամցիների զինվորական հանդերձանքն ու հագեցվածությունը զիջում էին ԱՄՆ-ի բանակին, սակայն վերջիններս այդ բացը լրացնում էին իրենց խորամանկությամբ և հնարամտությամբ: Բազմաթիվ թակարդներ, ամերիկյան ռումբերից վերցված վառոդներով լցված պայթուցիկներ և պարտիզանական որոգայթներ՝ այս ամենը սարսափեցնում էր ամերիկյան բանակի զինվորին, որոնք ակնկալում էին հեշտ հաղթանակ և արագ վերադարձ տուն:

Ամերիկացիների համար Վիետնամի պատերազմը դարձավ ամենաարյունալին՝ պետության գոյության ողջ պատմության մեջ՝ տևեց ավելի քան երկուսուկես տարի: Ռազմական միջամտությունների 8 տարին խլեց 60 000 մարդու կյանք: Մարտական գոտիներից Ամերիկա վերադարձավ 300 000 վիրավոր և հաշմանդամ զինվոր, իսկ 2000 և ավելի զինվոր համարվեց անհետ կորած: Պատերազմը ամերիկացի ժողովրդի համար դարձավ հոգեբանական մեծ տրավմա: Ինչ վերաբերում է Վիետնամին, ապա պատերազմն այնտեղ խլեց ավելի քան 1 միլիոն զինվորականի կյանք և ավելի քան 4 միլիոն խաղաղ քաղաքացու կյանք:

Պատերազմի ավարտով, սակայն, ամերիկացի զինվորականների ծանր փորձությունները չավարտվեցին: Վիետնամից վերադառնալուց հետո նրանցից շատերի վարքագիծը մտահոգությունների տեղիք էր տալիս շրջապատող մարդկանց մոտ: Հետապնդող հիշողություններն արյունոտ պատերազմի մասին, մղձավանջները, մտքում մշտապես պտտվող մտքերը Վիետնամի պատերազմում տեղի ունեցած իրադարձությունների շուրջ հանգիստ չէին տալիս նախկին զինվորականներին: Այդ ամենը հանգեցնում էր ագրեսիայի, հակասոցիալական վարքի և հասարակության մեջ գոյություն ունենալու անհնարինությանը: Նախկին զինվորականները հանգստություն էին գտնում ալկոհոլի և թմրանյութերի մեջ, ինչն իր հերթին առավել էր բարդացնում իրավիճակը: Հենց այդ ժամանակ բժշկական հանրույթը սկսեց ահազանգել Վիետնամի պատերազմում մասնակցություն ունեցած զինվորականների հոգեկան առողջության և անհապաղ հետազոտություններ անցկացնելու կարևորության մասին: Արդյունքները հուսադրող չէին. զինվորականների մեծամասնության մոտ առկա էին հոգեկան բացահայտ խանգարումներ, որին նպաստել էր դաժան, միաժամանակ անիմաստ պատերազմը: Այս հիվանդությունը ստացավ «վիետնամական համախտանիշ» անվանումը, որը, սակայն, պատմության ընթացքում տեղի ունեցող այլ պատերազմների արդյունքում հայտնի դարձավ նաև որպես «աֆղանական», «չեչենական» համախտանիշ:

Հետտրավմային սթրեսային խանգարումը լրջագույն խնդիր է, որին առերեսվում են մարդիկ մարտական գործողությունների ավարտին: Զինվորականներից շատերն առնվազն հոգեբանական աջակցության կարիք են ունենում, քանի որ անհնարին է հիշողությունից ջնջել պատերազմի ողջ սարսափը: Դա է պատճառը, որ մարտիկների մի մասին անհրաժեշտ է լինում մասնագիտական օգնություն, հատկապես նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել և իրենց աչքերով տեսել պատերազմի ամենադաժան ու արյունոտ դրվագները: Այդ իրավիճակում մասնագետների հիմնական նպատակն օգնելն է զինվորականներին քաղաքակիրթ հասարակություն՝ որպես առողջ մարդ վերադառնալուն, քանի որ գրեթե անհնարին է միայնակ հաղթահարել ողբերգական պատերազմի՝ անընդհատ ի հայտ եկող հիշողությունները:

Հետպատերազմյան համախտանիշը մարդկանց մի խմբի մոտ դրսևորվում է ագրեսիայի տեսքով, մյուս խմբի մոտ՝ ինքնամփոփվածության, իսկ ավելի փոքր խմբի մոտ՝ մշտապես տանջող մեղքի զգացողությամբ. նրանց համար անտանելի է այն միտքը, որ իրենք կենդանի են մնացել, մինչդեռ իրենց ընկերները զոհվել են մարտի դաշտում: Նրանք համոզված են, որ չեն արել հնարավոր այն ամենը՝ զորակիցներին փրկելու համար, այդ իսկ պատճառով մեղավոր են նրանց մահվան մեջ: Խաղաղ կյանքում նրանց դժվար է հարաբերություններ կառուցել մտերիմների

ու գործընկերների հետ, քանի որ հաճախակի նյարդային պոռթկումները քանդում են մարդկային կապերը:

Հոգեբանական տրավմայի ու նյարդային սթրեսի հետ զուգահեռ, պատերազմի ավարտին և դրան հաջորդող տարիների ընթացքում կարող են ի հայտ գալ նաև առողջական այլ խնդիրներ՝ սիրտ-անոթային հիվանդություններ, ստամոքսի խոց, շնչուղիների խանգարումներ և այլն: Օրինակ, Աֆղանստանից սովետական բանակի դուրս գալուց 5 տարի անց բուժզննում անցած վետերանների կեսի մոտ ախտորոշվել էր սրտի աշխատանքի անբավարարվածություն: Յուրաքանչյուր երկրորդը տառապում էր աղեստամոքսային տրակտի խնդիրներից, իսկ «աֆղանցիների» մեծ մասը դիմում էր բժիշկիների՝ դյուրագրգիռ, ագրեսիվ լինելու գանգատներով և երբեմն էլ ինքնասպանություն գործելու մտքի առկայությամբ:

Հետտրավմային սթրեսային խանգարումն ունենում է նաև ազգային դրսևորում: Աֆղանստանի հայտնի ռազմական գործողությունները մարտերի մասնակից զինվորականների շրջանում նմանօրինակ հոգեբանական հիվանդությունների առաջացման առիթ հանդիսացան: Ռուսաստան վերադարձած «աֆղանցիները» սկսել էին ագրեսիվ արձագանքել երկրի հասարակական կյանքում առկա թերություններին: Անկարող լինելով որևէ բան դեպի լավը փոխելու՝ նրանք սկսեցին ընդդիմանալ հասարակությանը: Կարճ ժամանակահատվածում ձևավորվեցին ռազմիկ ինտերնացիոնալիստների խմբեր, որոնց գլխավոր խնդիրն ուժի կիրառմամբ արդարության վերականգնումն էր՝ ճիշտ ինչպես պատերազմում: Խմբերի ներսում փոխհարաբերությունները հիմնվում էին գործընկերության ու փոխօգնության վրա, սակայն իրենց խմբից դուրս «աֆղանցիները» մարդկանց վերաբերվում էին անվստահությամբ, իսկ հաղորդակցվելիս՝ հուզականորեն անկայուն էին:

Պատերազմը Վիետնամում ոչ միայն իր բացասական հետևանքներն ունեցավ պատերազմի մասնակից առանձին անհատների վրա, այլև ազդեց նաև ողջ Ամերիկայի վրա: Այս պատերազմը մեկն էր այն սակավաթիվներից, որտեղ ուղղակիորեն ներգրավված էին Ամերիկայի քաղաքացիները, որտեղ նրանք զոհվում էին, և որտեղ նրանք պարտվեցին: Արդյունքում, Միացյալ Նահանգների շարքային քաղաքացիների շրջանում առաջացավ վախ նոր պատերազմների հանդեպ, որոնցում կարող է մասնակցություն ունենալ ԱՄՆ-ը: Այսինքն՝ «վիետնամական համախտանիշ»-ի դրսևորումներից մեկն էլ վախն է օտար տարածքում նոր արյունահեղ պատերազմներում ներգրավված լինելու հանդեպ: Կարելի է ասել, որ Վիետնամում պատերազմի ավարտից հետո Միացյալ Նահանգները այլևս չի պատերազմել այդպիսի ռազմավարությամբ: Պետության

ռազմավարությունը փոխվեց՝ շարքային հարկատուների վրդովմունքը չառաջացնելու համար: Այժմ ԱՄՆ-ը նախընտրում է կա՛մ օգտագործել «փափուկ ուժի» գործիքակազմը, կա՛մ սահմանափակ քանակությամբ խմբեր ուղարկել թեժ կետեր, որոնցում ցանկություն ունի հաստատել իր ազդեցությունը: Վիետնամական համախտանիշի պատճառով ամերիկացիները պարզապես հրաժարվում էին սեփական կյանքը վտանգելու գնով պաշտպանել այլ ազգի շահերը: Իսկ որոշ քաղաքական գործիչներ մանիպուլացնում են դա՝ պնդելով, որ ազգը պարզապես վախենում է հերթական ռազմական պարտությունից: Ամփոփելով՝ պարզ է դառնում, որ հետպատերազմյան համախտանիշն իր դրսևորումներով ազդեցություն է ունենում նաև հասարակական ընկալման վրա:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի դեպքում, օրինակ, Ադրբեջանի կողմից պատերազմի ժամանակ կռվում էին սիրիացի վարձկանները: Մարդու իրավունքների սիրիական դատարանի տվյալներով՝ զինված հակամարտության հենց սկզբից Սիրիայից դուրս էր բերվել առնվազն 2050 վարձկան՝ 400 հոգիանոց խմբերով: Բրիտանական «Independent»-ին հաջողվել էր զրուցել վարձկանների հետ, որոնք մեկնել էին Ադրբեջան, և պարզել, որ նրանց առաջին հավաքագրումը եղել է հուլիսին՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջև լարվածության աճի սկզբում: Վարձկաններից յուրաքանչյուրին խոստացել էին 1200-1500-ական ԱՄՆ դոլար, ինչը ՄԱԿ-ի՝ 2019թ. զեկույցի համաձայն՝ զգալի գումար է մի երկրի բնակչի համար, որտեղ 83%-ը աղքատ է: Սա արդյունք է այն բանի, որ դեռ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմից հետո տարբեր լրատվամիջոցներում հայտնվող նյութերի համաձայն՝ Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը հրաժարվում էր մասնակցել զինակոչին ու ծառայել բանակում՝ գիտակցելով ու գնահատելով հնարավոր պատերազմին մասնակցելու հետևանքները:

Այս միտումը առավել սրվեց 2022 թվականի սեպտեմբերին՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայից հետո: Եթե տասնամյակներ շարունակ արմենոֆոբիան պետական քարոզչական քաղաքականություն դարձրած վարչակարգին մասամբ հաջողվել էր շարքային ադրբեջանցիներին ներշնչել կեղծ պատմական հիշողություն Արցախի վերաբերյալ, ապա ՀՀ ինքնիշխան տարածքի պարագայում անզոր էր անգամ այդ սուտ քարոզչական գործիքակազմը: Վերը նշվածից կարող ենք պնդել, որ հետպատերազմյան համախտանիշի դրսևորումները վաղ թե ուշ զգալի ազդեցություն են ունենալու Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում՝ անգամ այնտեղի ավտորիտար քաղաքական ռեժիմի պարագայում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*